ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/185

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.11.2018թ. թիվ 27/26-3/21745-18 գրությամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Բերդի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) 21.11.2018թ. գրության հիման վրա, 28.11.2018թ. թիվ 27/26-3/21745-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ՍՑ-ԱՄ-2018/185 ընթացակարգի շրջանակներում գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/185 ընթացակարգի շրջանակներում 03.12.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. **<u>Բերդի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բերդի համայնքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.11.2018թ. գրությամբ հայտնել է, որ Բերդի համայնքապետարանի կարիքների համար բնական գազի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՏՄԲՀ-ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն 06.11.2018թ. հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 25 000 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն հայտնել է, որ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ ներկայացվում է «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/156 ընթացակարգի շրջանակներում 03.12.2018թ. ժամը 10:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

4. ՍՑ-ԱՄ-2018/185 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/185 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Բերդի համայնքապետարանի կողմից Բերդի համայնքապետարանի կարիքների համար 2018թ. 4-րդ եռամսյակի վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ***06.11.2018թ.*** հայտ է ներկայացրել «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն:

2. «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով առաջարկած ընդհանուր գինը կազմել է 1 700 499.99 ՀՀ դրամ:

3. Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 09.11.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.6-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

4. ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 20-րդ կետի հիման վրա 14.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 25 000 ՀՀ դրամի չափով:

5. Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 19.11.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.11.2018թ. թիվ 27/26-3/21745-18 գրությունը, Բերդի համայնքապետարանի 21.11.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ԳԲԽ-ԱՄ-2018/98 բողոքի շրջանակներում «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի վերաբերյալ ներկայացված փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղն. զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն .զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած

մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Սույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրված նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով, «Բերդի համայնքապետարանի կողմից Բերդի համայնքապետարանի կարիքների համար 2018թ. 4-րդ եռամսյակի վառելիքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով ***06.11.2018թ.*** հայտ է ներկայացրել «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն:

«Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 2-րդ չափաբաժնին մասնակցելու նպատակով առաջարկած ընդհանուր գինը կազմել է 1 700 499.99 ՀՀ դրամ:

Ընկերությունը հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջներին:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 09.11.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1.6-րդ ենթակետով կայացված որոշմամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 09.11.2018թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից Կարգի 20-րդ կետի հիման վրա 14.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 25 000 ՀՀ դրամի չափով:***

Էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 19.11.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով կայացված որոշմամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 14.11.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 06.11.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 25 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ԳԲԽ-ԱՄ-2018/98 բողոքի շրջանակներում ներկայացրել է 06.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածք, որի համաձայն՝ Ընկերությունը 06.11.2018թ. դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Միաժամանակ Ընկերությունը տրամադրել է 12.11.2018թ. թիվ 145 վճարման հանձնարարականը, որի համաձայն՝ Ընկերությունը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե վճարել է 50 000 ՀՀ դրամ:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին

մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1 հավելվածով՝ էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Սակայն, ուսումնասիրելով 06.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ Ընկերությունը ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

Ուստի հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, գտնում եմ, որ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ն «ՀՀ ՏՄԲՀ ԷԱՃ-ԱՊՁԲ-18/09» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումներ

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.11.2018թ. թիվ 27/26-3/21745-18 գրությամբ «Վիցի Գրուպ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 07608981) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**